Հայաստանում՝ Բուլանըխում. «Առևանգութիւնը տեղի կ'ունենայ գլխաւորապէս աղջիկ ու տղայի համաձայնութեամբ—սիրահարութեամբ. երկրորդ՝ երբ աղջիկը լիովին անհամաձայն է և առևանգութիւնը կրկատարուի բռնի, կոպիտ ուժի միջոցաւ, առևանգողները կ'աշխատեն շուտով աղջկայ կուսութիւնը խախտել, որպէսզի կամայ-ակամայ աղջիկը հնազանդեցնեն» [1]։

IV.

Վերոյիշեալ մի շարք փաստերը պատկերացնում են առևանգման գոյութեան նշոյլները հայկական կեանքում։ Մենք տեսնում ենք, որ այդ բոլոր դէպքերում առևանգումն առաջացնող պայմանները, գործողութեան հանգամանքներն ու հետևանքները զարմանալի նմանութիւն ունին իրար հետ զանազան հայ կենտրոններում ծաղկող ժողովրդական կեանքում։ Չնայած այդ ժամանակակից օրինակներին, այնուամենայնիւ առևանգումն, իբրև սովորութական իրաւունքի մի դրական հիմնարկութիւն, այժմս արդէն վերացած կարելի է համարել մեր ժողովրդական կեանքից։ Սակայն երբեմն գոյութիւն ունեցող առևանգման սովորութիւնը թողել է հետքեր, որոնք այժմս էլ շօշափելի են իւրաքանչիւր քայլափոխում մեր սովորութական իրաւունքի մէջ։ Հասարակական յարաբերութիւնների կարգերը ժամանակի յառաջադիմութեան հետ չեն փոփոխւում յանկարծակի շրջումներով, չեն դադարում իրենց գոյութեան կռիւը մղել պատմական ճակատագրով զարգացող նոր կարգերի դէմ։ Եւ նոյն իսկ, երբ ներս խուժող նոր տարրերը յաղթանակով սկսում են տիրել ժողովրդական կեանքին, վերջինիս հին իրաւաբանական յարաբերութիւնները, թէև մեռած, իրականապէս վերացած, բայց և այնպէս շարունակում են երկար ժամանակ պահպանուել զանազան սովորութիւնների, ծէսերի, անոտիապաշտութիւնների և այլ նման արտաքին ձևերի մէջ։

[1]) Ազգ. Հանդէս՝ գիրք Ե. 1899 թ. Բուլանըխ.

Հայ մատենագրության թուանշային գրադարան